

# ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Բանակի օրվա կապակցությամբ

26.01.2018



Մի րեւի՛ հայրենակիցներ, շնորհավորում եմ բոլորիս Բանակի օրվա կապակցությամբ: Հունվարի 28-ը Հայաստանի Հանրապետության պետական տոնացույցի ամենանվիրական տոներից է: Տոն, որ ամենասպասվածն է ու ամենքինս է:

Այս տարի բոլորում է Հայոց բանակի կազմավորման 26-րդ տարեդարձը: Բոլորս գիտենք, որ Հայկական բանակի կազմավորման տարեգրությունն անմիջականորեն կապված է Արցախյան շարժման, Հայաստանի Հանրապետության անկախության, Արցախի ազատության համար մղված պայքարի հետ: Հայոց բանակը կամավորական խմբերի տեսքով ծլարձակեց ազգային զարթոնքի՝ Արցախյան շարժման հիմքերում, իսկ ազատագրական պայքարում ձևավորվեց որպես կանոնավոր բանակ: Հայոց բանակն այսօր արժանիորեն է կրում Արցախյան ազատամարտի հաղթանակի դափնին, որն ուժ ու կորով է տալիս, հայրենիքի սահմաններն անառիկ պահելու հաստատակամություն է հաղորդում հայոց բանակի զինվորներին և բանակի շարքերը համալրող նորակոչիկներին:

Բանակի օր արտահայտությունը նվիրական զգացումներ ու հպարտություն է առաջացնում բոլորիս հոգիներում, միևնույն ժամանակ մեզ կոչում մեծ պատասխանատվության՝ հայրենիքի պաշտպանության սրբազան առաքելությունն իրականացնող հայազգի քաջարի զավակների հանդեպ, զինվորից մինչև հրամանատար:

Մի րեւի՛ հայրենակիցներ, որպես սահմանամերձ մարզի բնակիչներ, մենք լավ ենք գիտակցում խաղաղության գինը և անսահման հոգատարությամբ ենք վերաբերում զինվորական հագուստ կրող յուրաքանչյուր ծառայողի, որպես երախտագիտություն՝ մեր խաղաղ կեցության ու կյանքի բնականոն գործունեության: Ահա թե ինչպես է, որ տոնն այս հյուրընկալվում է հայկական ցանկացած ընտանիքում, իր հետ բերելով հպարտության զգացողություն՝ բանակի քաջարի մարտիկների գործած սխրանքների համար, խոնարհումի զգացումներ՝ զոհված մեր զավակների հիշատակի առջև:

Հա՛յ զինվոր, քեզ՝ ամուր առողջություն, ամրակուռ բազուկ, անսասան կամք և հոգու արիություն:

Հայոց բանակի սպանե՛ր և գեներալնե՛ր, ձեզ՝ մտքի սլացք, սրատեսություն և ռազմական իմաստություն:

Փա՛ռք ու պատի՛վ Ձեզ, հայոց բանակի Արծիվնե՛ր: Թող խաղաղությամբ բացվեն ձեր բոլոր արշավույսները և Աստված պահապան լինի Ձեզ: